Կորպորատիվ բանկային ծառայությունների սակագներ

Տեղեկատվական ամփոփագիր իրավաբանական անձանց համար

Հրապարակման ամսաթիվ՝ Սեպտեմբեր, 2023

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Գործող պայմաններին ամբողջապես ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայք՝ www.business.hsbc.am կամ զանգահարեք +374 60 655 200 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

HSBC

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ **4**

Ընթացիկ հաշիվ **4**

Դրամական միջոցների կառավարում **7**

Դրամական փոխանցումներ **9**

Հեռախոսային բանկային ծառայություններ **15**

Այլ ծառայություններ **15**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի կազմակերպությունների հաշվի սպասարկման հետ կապված բոլոր ծառայությունների համար սահմանված են հետևյալ սակագները:

Բանկի կողմից սահմանված Հիմնական պայմանները և սակագները կարող են փոփոխվել:

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի ծառայությունների, գործող սակագների և նախատեսվող փոփոխությունների մասին ամբողջական և ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել բանկի ցանկացած գրասենյակ/մասնաճյուղ, զանգահարել +374 60 655 000 հեռախոսահամարով կամ այցելել www.business.hsbc.am:

Բոլոր տեսակի վճարները գանձվում են ՀՀ դրամով:

Սակագներով նախատեսված վճարները որպես կանոն վճարվում/գանձվում են այն բանկային հաշվից, որով կատարվում է համապատասխան գործարքը/գործառնությունը, ընդ որում՝ արտարժութային բանկային հաշվի դեպքում Բանկին իրավունք է վերապահվում գանձվելիք գումարի չափով արտարժույթը փոխանակել ՀՀ դրամի և գանձել: Արտարժույթի փոխանակման գործարքն իրականացվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից գործարքին նախորդող/ընթացիկ օրվա համար հրապարակված արտարժույթի միջին փոխարժեքով (կախված գործարքի/գործառնության ժամից), եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի և Հաճախորդի միջև:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ

Հաշվի բացման վճար	5.000 ՀՀ դրամ
Լրացուցիչ հաշվի բացման վճար	3.000 ՀՀ դրամ
Նվազագույն մուտք	Չի պահանջվում

Հաճախորդի՝ Բանկում սպասարկվող հաշիվ(ներ)ը, որի/որոնց միջին եռամսյակային մնացորդների հանրագումարը ցանկացած պահի դրությամբ երեք ամիս անընդմեջ փոքր է 5.000.000 ՀՀ դրամից , կարող է/են փակվել Բանկի միակողմանի որոշմամբ:

Ընթացիկ հաշվի փակման համար վճարներ չեն գանձվում:

Սպասարկման ամսական վճար

Անկախ այն փաստից, թե արդյոք հաճախորդը հաշիվն օգտագործում է, թե ոչ՝ յուրաքանչյուր ընթացիկ հաշվից գանձվում է սպասարկման ամսական վճար՝ 500[1] ՀՀ դրամի չափով:

1 Արտարժույթային հաշվից գանձման դեպքում փոխանակումն իրականացվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գործարքին նախորդող/ընթացիկ օրվա համար հրապարակված արտարժույթի միջին փոխարժեքը (կախված գործարքի/գործառնության ժամից), եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Հաճախորդի միջև:

Լրացուցիչ տարեկան սպասարկման վճար

Կիրառվում է միայն դեսպանատների հաշիվների նկատմամբ:

Բանկը յուրաքանչյուր տարի կկիրառի և կգանձի լրացուցիչ տարեկան սպասարկման վճար՝ 1.900.000[1] ՀՀ դրամ գումարի չափով:

Միջին եռամսյակային մնացորդ

Եթե Հաճախորդի՝ Բանկում սպասարկվող բոլոր հաշիվների միջին եռամսյակային մնացորդների հանրագումարը որևէ ամսվա առաջին աշխատանքային օրվա դրությամբ՝ նախորդող երեք ամիսների համար, փոքր է 5.000.000 ՀՀ դրամից (կամ արտարժութային հաշիվների դեպքում դրան համարժեք արտարժույթից), ապա յուրաքանչյուր ամիս գանձվում է **լրացուցիչ սպասարկման վճար՝ 100.000[2] ՀՀ դրամի չափով:**

Առավելագույն մնացորդ

Հաճախորդի հաշվի կրեդիտային մնացորդը (Բանկում մի քանի հաշիվ ունենալու պարագայում միասին վերցրած բոլոր հաշիվների կրեդիտային մնացորդների հանրագումարը, ստորև՝ **Մնացորդ**) որևէ օրվա վերջի դրությամբ 9.500.000.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը գերազանցելու դեպքում (**Գերազանցող մնացորդ**), սկսած գերազանցելու օրվան հաջորդող 1-ին օրվանից, Հաճախորդն օրական կտրվածքով պարտավոր է վճարել հաշվի սպասարկման օրական լրացուցիչ վճար, Մնացորդի տարեկան 3 տոկոսի չափով:

Ընդ որում՝

Յուրաքանչյուր օրվա համար օրական լրացուցիչ վճարը ենթակա է գանձման ՀՀ դրամով հաջորդ օրը:

Սույն կետի իմաստով՝

- Արտարժութային հաշիվների մնացորդի, Գերազանցող մնացորդի հաշվարկման և լրացուցիչ վճարի գանձման նպատակով հիմք է ընդունվում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գործարքին նախորդող/ընթացիկ օրվա համար հրապարակված արտարժույթի միջին փոխարժեքը (կախված գործարքի/գործառնության ժամից), եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Հաճախորդի միջև:
- **Բանկի կողմից առաջարկվող՝ համապատասխան տեսակի բանկային հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների դրույքները կազմում են 0%:**

Կորպորատիվ բանկոմատային քարտեր

Առաջին 3 քարտերի թողարկում[1]	Անվճար
Հավելյալ քարտի թողարկում[1]	3.000 ՀՀ դրամ
Քարտի վերաթողարկում	3.000 ՀՀ դրամ
Ամսական սպասարկում[2]	1.000 ՀՀ դրամ
Փոխանցում HSBC Բանկ Հայաստանում սպասարկվող հաշիվների միջև	Անվճար
Փոխանցման օրական սահմանաչափ[3]	3.000.000 ՀՀ դրամ
Կանխիկի դուրսբերում Բանկին պատկանող բանկոմատներից	Անվճար
Կանխիկի դուրսբերման օրական սահմանաչափ[3]	500.000 ՀՀ դրամ

1 Թողարկվող առաջին երեք քարտերը տրամադրվում են անվճար: Չորրորդ քարտից սկսած յուրաքանչյուր քարտի համար գանձվում է հավելյալ քարտի թողարկման վճար:
2 Ամսական սպասարկման վճարը գանձվում է յուրաքանչյուր ամսվա սկզբում՝ նախորդ ամսվա համար:
3 Քարտով կատարված գործարքների օրական սահմանաչափը հանդիսանում է ընդհանուր սահմանաչափ Կազմակերպությանը թողարկված բոլոր քարտերի համար:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կանխիկով գործարքներ/գործառնություններ

Կանխիկի մուտքագրում	Անվճար
Կանխիկ մուտքագրված գումարների կանխիկացում ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո[1]	Անվճար
Անկանխիկ գումարների կանխիկացում[2]	
ՀՀ դրամով	0.2%, նվազագույնը 1,000 ՀՀ դրամ
ԱՄՆ դոլար/եվրո	1%
Այլ արտարժույթներով	2%
Արտարժույթով հնամաշ թղթադրամների փոխանակում, եթե պահպանված են անհրաժեշտ պաշտպանական հատկանիշները և մասերը	5%*

1 Այլ արժույթների համար տես անկանխիկ գումարների կանխիկացման սակագները:
2 Տվյալ սակագինը կիրառելի է բանկի կողմից արտարժույթով տրամադրված վարկային միջոցների կանխիկացման նկատմամբ:
Տվյալ սակագինը կիրառելի չէ արտարժույթի փոխարկման գործարքների գումարների և ավանդների տոկոսագումարների կանխիկացման դեպքում:
Սակագինը չի կիրառվում ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով կանխիկ մուտքագրված դրամական միջոցների նկատմամբ:
Կանխիկ են համարվում 91 օր և ավել պայմանագրային ժամկետով այն ավանդների մայր գումարները, որոնք չեն դադարեցվել մինչև պայմանագրային ժամկետի ավարտը, ինչպես նաև ավելի կարճ պայմանագրային ժամկետով այն ավանդների մայր գումարները, որոնք անընդմեջ վերակնքվել են որպես ավանդ 91 օր և ավել ժամանակահատվածում:
Հաշվարկվում է կանխիկացման ենթակա գումարից:

* Հաշվարկվում է փոխանակման ենթակա գումարից:

Կանխիկի հավաքագրման ծառայություններ[1]

Գումարի և արժեքների տեղափոխում՝ ինկասացիոն ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով, Բանկի գրասենյակից/մասնաճյուղից հաճախորդի նախընտրած ուղղությամբ և հակառակը:	Պայմանագրային
Գումարի և արժեքների տեղափոխումը կկատարվի հաճախորդի կողմից հայտը ներկայացնելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:	

1 Ինկասացիոն ծառայությունները մատուցվում են Հաճախորդի, Բանկի և ինկասացիոն ծառայությունը մատուցող կազմակերպության միջև եռակողմ պայմանագրի առկայության պարագայում:

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

Փոխանցումներ ՀՀ դրամով (ՀՀ տարածքում)[1]

Հաշվից փոխանցումներ բանկի մասնաճյուղերում թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների միջոցով[2]	5,000 ՀՀ դրամ[3]
Հաշվից փոխանցումներ HSBCnet համակարգի միջոցով	Անվճար
Ստացված փոխանցումների մուտքագրում հաշվին	Անվճար
Վճարման հանձնարարականի փոփոխում կամ չեղարկում	
Բանկի կողմից ստացված, բայց չկատարված	Անվճար
Բանկի կողմից ստացված և կատարված	5,000 ՀՀ դրամ[4]

Արտարժույթով փոխանցումներ

- Կից կարելի է ուղարկել վճարման բացատրություններ և ցուցումներ:
- Բանկն իրականացնում է փոխանցումներ հետևյալ արտարժույթներով՝ USD, EUR, GBP, RUB, CHF, AUD, AED, HKD, CAD, JPY, CNY:

1 ՀՀ տարածքում ՀՀ դրամով փոխանցումների դեպքում, եթե փոխանցվող գումարը պարունակում է լումա, ապա այն կկլորացվի մինչև տասնորդական նիշը՝ ստանդարտ մոտեցմամբ:
2 Եթե ՀՀ դրամով թղթային վճարման հանձնարարականը (առավելագույնը 25 միլիոն ՀՀ դրամ) Բանկ է ներկայացվում ժամը 14:00-ից հետո, բայց ոչ ուշ, քան 15:00-ն և պահանջվում է կատարել այն նույն օրը, ապա Բանկը կատարում է հանձնարարականը՝ գանձելով 5,000 ՀՀ դրամի չափով հավելյալ վճար:
3 Արտարժույթային հաշվից գանձման դեպքում փոխանակումը իրականացվում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գործարքին նախորդող/ընթացիկ օրվա համար հրապարակված արտարժույթի միջին փոխարժեքով (կախված գործարքի/գործառնության ժամից), եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Հաճախորդի միջև:
4 HSBCnet-ի միջոցով փոփոխություն կամ չեղարկում իրականացնելու դեպքում կկիրառվի նվազեցված վճար՝ 3,000 ՀՀ դրամ:

Փոխանցումներ ԱՄՆ դոլարով/եվրոյով	Կիրառվող գանձումներ
Հաշվից փոխանցումներ բանկի մասնաճյուղերում թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների միջոցով	0.3%* նվազագույնը 5,000 ՀՀ դրամ
Հաշվից փոխանցումներ HSBCnet համակարգի միջոցով	0.085%*
Փոխանցումներ ԱՄՆ դոլարից/եվրոյից բացի այլ արտարժույթով	
Հաշվից փոխանցումներ բանկի մասնաճյուղերում թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների միջոցով	3%* նվազագույնը 60,000 ՀՀ դրամ
Հաշվից փոխանցումներ HSBCnet համակարգի միջոցով	0.285%*

Այլ պայմաններ	
Բանկում առկա հաշիվների միջև փոխանցումներ	Անվճար
Արտարժույթով ստացված փոխանցումների մուտքագրում հաշվին, եթե միջնորդավճարները վճարված չեն փոխանցողի կողմից	6,000 ՀՀ դրամ
Արտարժույթով վճարման հանձնարարականի փոփոխություն կամ չեղարկում	
Բանկի կողմից ստացված, բայց չկատարված	Անվճար
Բանկի կողմից ստացված և կատարված	20,000 ՀՀ դրամ[5]

5 HSBCnet-ի միջոցով փոփոխություն կամ չեղարկում իրականացնելու դեպքում կկիրառվի նվազեցված վճար՝ 9,000 ՀՀ դրամ:

Գործարքի տեսակ	Արժույթ	Հանձնա-րարականի ներկայացման վերջնաժամկետ	Հանձնարարականի կատարման վերջնաժամկետ
Փոխանցումներ ՀՀ տարածքում HSBCnet համակարգի միջոցով ներկայացված վճարման հանձնարարականներ	AMD	Մինչև 15:00	Հանձնարարականի ներկայացման նույն օրվա ընթացքում
	AMD	15:00 –ից հետո	15:00-ից հետո ներկայացված հանձնարարականների դեպքում առավելագույնը հաջորդ բանկային օրվա ընթացքում
Փոխանցումներ ՀՀ տարածքում թղթային եղանակով ներկայացված վճարման հանձնարարականներ	AMD	Մինչև 14:00	Հանձնարարականի ներկայացման նույն օրվա ընթացքում
	AMD	14:00-ից հետո	14:00-ից հետո ներկայացված հանձնարարականների դեպքում առավելագույնը հաջորդ բանկային օրվա ընթացքում
Փոխանցումներ ՀՀ տարածքում	USD	Մինչև 14:00	Մինչև 14:00 ներկայացված հանձնարարականների դեպքում միևնույն բանկային օրվա ընթացքում**
		14:00-ից հետո	14:00-ից հետո ներկայացված հանձնարարականների դեպքում առավելագույնը հաջորդ բանկային օրվա ընթացքում**
	EUR	Մինչև 14:00	Մինչև 14:00 ներկայացված հանձնարարականների դեպքում միևնույն բանկային օրվա ընթացքում**
		14:00-ից հետո	14:00-ից հետո ներկայացված հանձնարարականների դեպքում առավելագույնը հաջորդ բանկային օրվա ընթացքում**
	RUB	Մինչև 13:00	Մինչև 13:00 ներկայացված հանձնարարականների դեպքում միևնույն բանկային օրվա ընթացքում
		13:00-ից հետո	13:00-ից հետո ներկայացված հանձնարարականների դեպքում առավելագույնը հաջորդ բանկային օրվա ընթացքում
	GBP, CHF, AED, HKD, CAD, CNY	Մինչև 17:00	Մինչև 17:00 ներկայացված հանձնարարականների դեպքում հաջորդ բանկային օրվա ընթացքում
		17:00-ից հետո	17:00-ից հետո ներկայացված հանձնարարականների դեպքում առավելագույնը երկրորդ բանկային օրվա ընթացքում
	AUD, JPY	Մինչև 17:00	Մինչև 17:00 ներկայացված հանձնարարականների դեպքում երկրորդ բանկային օրվա ընթացքում
		17:00-ից հետո	17:00-ից հետո ներկայացված հանձնարարականների դեպքում առավելագույնը երրորդ բանկային օրվա ընթացքում

Միջազգային փոխանցումներ	USD	Մինչև 17:00	Մինչև 17:00 ներկայացված հանձնարականների դեպքում միևնույն բանկային օրվա ընթացքում
		17:00-ից հետո	17:00-ից հետո ներկայացված հանձնարականների դեպքում առավելագույնը հաջորդ բանկային օրվա ընթացքում
	EUR	Մինչև 17:00	Մինչև 17:00 ներկայացված հանձնարականների դեպքում միևնույն բանկային օրվա ընթացքում
		17:00-ից հետո	17:00-ից հետո ներկայացված հանձնարականների դեպքում առավելագույնը հաջորդ բանկային օրվա ընթացքում
	RUB	Մինչև 13:00	Մինչև 13:00 ներկայացված հանձնարականների դեպքում միևնույն բանկային օրվա ընթացքում
		13:00-ից հետո	13:00-ից հետո ներկայացված հանձնարականների դեպքում առավելագույնը հաջորդ բանկային օրվա ընթացքում
	GBP, CHF, AED, HKD, CAD, CNY	Մինչև 17:00	Մինչև 17:00 ներկայացված հանձնարականների դեպքում հաջորդ բանկային օրվա ընթացքում
		17:00-ից հետո	17:00-ից հետո ներկայացված հանձնարականների դեպքում առավելագույնը երկրորդ բանկային օրվա ընթացքում
	AUD, JPY	Մինչև 17:00	Մինչև 17:00 ներկայացված հանձնարականների դեպքում երկրորդ բանկային օրվա ընթացքում
		17:00-ից հետո	17:00-ից հետո ներկայացված հանձնարականների դեպքում առավելագույնը երրորդ բանկային օրվա ընթացքում
Փոխանցումներ Բանկում սպասարկվող հաշիվների միջև	Բոլոր արժույթ-ների համար	Մինչև 17:00	Մինչև 17:00 տրված հանձնարականների դեպքում միևնույն բանկային օրվա ընթացքում
		17:00-ից հետո	17:00-ից հետո տրված հանձնարականների դեպքում առավելագույնը հաջորդ բանկային օրվա ընթացքում

Կարևոր նշումներ*

- Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար:
- Միջնորդ/շահառու բանկ(եր)ի գանձումները կարող են կատարվել թե՛փոխանցողի և թե՛ ստացողի միջոցների հաշվին, ըստ ցանկության՝ համաձայնեցնելով Բանկի հետ:
- Բանկի պարտավորությունն է Հաճախորդին տրամադրել անդորրագիր յուրաքանչյուր մատուցված ծառայության կատարման վերաբերյալ:
- Միջնորդ /շահառու բանկ(եր)ի գանձումները փոխանցողի հաշվից գանձման դեպքում կիրառվող միջնորդավճարներ.

ԱՄՆ դոլարով ԱՄՆ տարածքում գործող ցանկացած բանկի ուղղված փոխանցումների համար	5,000 ՀՀ դրամ
ԱՄՆ դոլարով ԱՄՆ տարածքից դուրս որևէ բանկի ուղղված փոխանցումների համար[6]	10,000 ՀՀ դրամ
Միջնորդավճար ԱՄՆ դոլարով ԱՄՆ տարածքից դուրս որևէ բանկի ուղղված փոխանցումների համար, երբ փոխանցողը վճարում է միայն առաջին միջնորդ բանկի միջնորդավճարը և շահառուն գումարը ստանում է այլ միջնորդ /շահառու բանկերի պահումներից հետո	5,000 ՀՀ դրամ
Այլ արտարժույթով փոխանցումների համար	5,000 ՀՀ դրամ[7]

Փոխանցումների ռեկվիզիտներ.

Եթե դուք ցանկանում եք ստանալ արտարժույթով փոխանցում արտերկրից, Ձեզ անհրաժեշտ է ունենալ տվյալ արտարժույթով բանկի թղթակցային հաշվի մանրամասները:

6 ԱՄՆ դոլարով ԱՄՆ տարածքից դուրս որևէ բանկի ուղղված փոխանցումների դեպքում HSBC Բանկ Հայաստանը չի երաշխավորում, որ շահառուն կստանա գումարն ամբողջությամբ:
7 Եթե փաստացի գանձված միջնորդավճարը ավել է, քան 20,000 ՀՀ դրամի համարժեքը, ապա վճարված և փաստացի գանձված միջնորդավճարների տարբերությունը ենթակա է գանձման փոխանցողի հաշվից:
* Հաշվարկվում է փոխանցման ենթակա գումարից:
** Վճարումների իրականացումը կարող է հետաձգվել համապատասխան արժույթների վճարահաշվարկային համակարգերի անհասանելիության պատճառով:

ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեռախոսային բանկային ծառայության գրանցում	**Անվճար**
Օգտագործման վճար	**Չի կիրառվում**

Կարևոր նշում՝ Կազմակերպությունների համար մատուցվող բանկային ծառայությունների ցանկը սահմանվում է «Հեռախոսային կապի միջոցով ներկայացված հանձնարարականի կատարման համաձայնագրի» հիման վրա, որը հասանելի է business.hsbc.am կայքում:

ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

POS-տերմինալներ

Սարքի տեղադրում	5.000 ՀՀ դրամ*
Ցածր շրջանառության տուգանք[1]	**5.000 ՀՀ դրամ***
Կատարված գործարքից պահվող միջնորդավճար	Պայմանագրային

1 Գանձվում է յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա ընթացքում: Կիրառվում է ամսական տուգանք, եթե նախորդ եռամսյակի միջին ամսական շրջանառությունը ցածր է 500,000 ՀՀ դրամից, ապա միջին ամսական շրջանառությունը հաշվարկվում է հիմք ընդունելով տվյալ հաճախորդին մատուցվող բոլոր POS տերմինալների միջոցով կատարված շրջանառության գումարը:

* Ներառյալ ԱԱՀ:

Աշխատավարձային հաշիվների վարում

Կազմակերպությունների կողմից աշխատավարձերի ամսական վճարումների կատարում	
Եթե աշխատավարձ ստացողների ցուցակը տրամադրվում է թղթային և էլեկտրոնային եղանակով	Անվճար
Եթե աշխատակիցների ցանկը տրամադրվում է միայն թղթային եղանակով	10,000 ՀՀ դրամ

Չեկեր/չեկային գրքույկներ[1]

Չեկային գրքույկի տրամադրում	Անվճար
Վճարման արգելանքի կիրառում	3.000 ՀՀ դրամ
Վճարման արգելանքի չեղարկում	**Անվճար**
Անբավարար մնացորդի պատճառով չեկի հետ վերադարձ	**5.000 ՀՀ դրամ**

1 Չեկային գրքույկը տրամադրվում է միայն ՀՀ դրամով կամ ԱՄՆ դոլարով ընթացիկ հաշվի առկայության դեպքում:

Բանկային հաշվի քաղվածքների/այլ փաստաթղթերի առաքում

Փոստով ՀՀ տարածքում

Ամսական	**Անվճար**

Փոստով ՀՀ տարածքից դուրս (միայն ստանդարտ փոստային ծառայության միջոցով)

Ամսական (գանձվում է ամսական)	25.000 ՀՀ դրամ[1]*

Էլ-փոստով

Ամսական, շաբաթական, օրական	**Անվճար**

SWIFT-ով

Ամսական, շաբաթական, օրական	**Անվճար**

Մասնաճյուղերից (առձեռն)

Ամսական, շաբաթական, օրական	**Անվճար**

1 Արտարժույթային հաշվից գանձման դեպքում փոխանակումն իրականացվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գործարքին նախորդող/ընթացիկ օրվա համար հրապարակված արտարժույթի միջին փոխարժեքով (կախված գործարքի/գործառնության ժամից), եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Հաճախորդի միջև:

* Ներառյալ ԱԱՀ:

Բանկային հաշվի տեղեկանքների/քաղվածքների տրամադրում և լիազորագրի ձևակերպում

Լիազորագրի ձևակերպում և հաշվի տվյալների համապատասխան փոփոխում	5.000 ՀՀ դրամ*
Աուդիտի նպատակներով հաշվի վերաբերյալ տեղեկությունների տրամադրում	10.000 ՀՀ դրամ*
Հաշվեկշռի հաստատման[1] / բանկային հաշվի / վարկի վերաբերյալ տեղեկանքներ	5.000 ՀՀ դրամ*
Բանկային հաշվի յուրաքանչյուր քաղվածքի կամ գործարքի վավերացման փաստաթղթի պատճենի տրամադրում (եթե այն ունի ավելի քան 6 ամսվա վաղեմություն)	3.000 ՀՀ դրամ*
Բանկային հաշվի յուրաքանչյուր ամսվա պատմության վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (եթե այն ունի ավելի քան 6 ամսվա վաղեմություն)	3.000 ՀՀ դրամ*

Նշումներ՝

- HSBCnet օնլայն բանկային ծառայության, ինչպես նաև իրավաբանական անձանց համար ժամկետային ավանդների պայմանները և սակագները ներկայացված են համանուն տեղեկատվական ամփոփագրերում և business.hsbc.am ինտերնետային կայքում:

Հետադարձ կապ՝

Զանգահարեք մեզ (+ 374 60) 655 200 հեռախոսահամարով, եթե ունեք հարցեր Ձեր ամենօրյա բանկային գործառնությունների վերաբերյալ: Մենք կօգնենք գտնել Ձեր հարցման լավագույն լուծումը:

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել մեզ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ hsbc.armenia@hsbc.com :

1 Հաշվեկշիռը հաստատող տեղեկանքը տրամադրվում է հայտը ստանալու օրվա և ժամի դրությամբ:

* Ներառյալ ԱԱՀ:
Բանկային հաշվի տեղեկանքների/քաղվածքների տրամադրումը և լիազորագրերի ձևակերպումը կատարվում է 3-10 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն որոշ դեպքերում կարող է պահանջվել ավելի երկար ժամանակ:

Նշումներ՝

- **Սույն ամփոփագրում ներկայացված են «Իրավաբանական անձանց մատուցվող ծառայությունների սակագները»:**
- **Իրավաբանական անձանց մատուցվող ծառայությունների ընդհանուր նկարագրությունը ներկայացված է business.hsbc.am կայքում և «Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ» տեղեկատվական ամփոփագրում:**
- **Իրավաբանական անձանց մատուցվող ծառայությունների տրամադրման հիմնական պայմաններին կարող եք ծանոթանալ business.hsbc.am կայքում և «Հաճախորդների բանկային հաշիվների, բանկային ավանդների, էլեկտրոնային բանկային ծառայությունների և բանկային այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ իրավաբանական անձանց համար» տեղեկատվական ամփոփագրում:**

Թողարկված է «էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից

«էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հանդիսանում է էյչ-Էս-Բի-Սի Խմբի անդամ, որն աշխարհի ֆինանսական և բանկային ծառայություններ տրամադրող խոշորագույն կազմակերպություններից մեկն է: էյչ-Էս-Բի-Սի Խմբի միջազգային ցանցը ներառում է 63 երկիր և տարածաշրջան:

www.business.hsbc.am
+374 60 655 200

Իրավաբանորեն հաստատված է
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տերյան փողոց 66
Գրանցման համար 67

© «էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2023:
Բոլոր իրավունքները պահպանված են: